

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ



HOLY TRINITY
ARMENIAN APOSTOLIC CHURCH

2 Մեայտնմբեր – September 2018

**Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԷՆ ԵՏՔ
ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ**


Ճաշու Ընթերցուածներ

Ես. Ժ. 12-19, Բ. Կորնթ. 2-12-3.3, Մարկ. 2. 30-44

**THIRD SUNDAY AFTER THE ASSUMPTION OF THE HOLY
MOTHER OF GOD**

Synaxis Readings

Isaiah 10:12-19; 2 Corinthians 2:12-3:3; Mark 6:30-44



Մենք գիտցանք Աստուծոյ մեզի հանդէպ ունեցած սէրը, ու
հաւատացինք: Աստուած սէր է. ա՛ն
որ կը բնակի սիրոյ մէջ՝ կը բնակի Աստուծոյ մէջ, եւ
Աստուած՝ անոր մէջ: (1 Յովհ. 4:16)

And so we know and rely on the love God has for us. God is love.
Whoever lives in love lives in God, and God in them. (1 John 4:16)

920 Progress Avenue, Toronto, ON M1G 3T1 Tel: (416)431-3001
www.TorontoArmenianChurch.com

ՆԻԿԻՈՅ ԱՌԱՋԻՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ 318
ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՕՐ
(Մեպտեմբեր 1, 2018)

Քրիստոնեական Եկեղեցւոյ նախնական շրջաններուն կարգ մը մոլորեցուցիչ «վարդապետութիւններ» յառաջ եկան, որոցմէ IV դարուն տարածուեցաւ արիոսականութիւնը, որ հիմնուած էր Յիսուսի անձի նկատմամբ Արիոս Աղեքսանդրիացիի տեսակէտին վրայ: Արիոսի համաձայն, Յիսուս Աստուածորդին, Հայր Աստուծոյ բնոյթէն չէ. այսինքն՝ Որդին Աստուած չէ, այլ բարձրագոյն արարած մը, որուն Հայր Աստուած ստեղծած էր աշխարհի ստեղծումէն առաջ: Արիոսի այս տեսակէտը սկսաւ տարածուիլ եւ վէճերն ու հակառակութիւնը եկեղեցիներու միջեւ սաստկացաւ:

Կոստանդիանոս կայսրը աշխատանք տարաւ, որ արիոսականութեան խնդիրը ժողովի մը մէջ լուծուի եւ 325 թուին բոլոր քրիստոնեայ աշխարհի եպիսկոպոսները հրաւիրեց Նիկիա քաղաքը, ընդհանուր ժողովի: Տիեզերական այս առաջին ժողովին ներկայ էին ընդհանրական եկեղեցւոյ 318 հայրապետներ:

Կոստանդիանոս կայսրը Հայոց Տրդատ թագաւորին ալ Հրովարտակ ուղղարկեց, որպէսզի Ս. Գրիգոր Լուսաւորիչի հետ մասնակցին այդ ժողովին: Սակայն հանգամանքներու բերումով, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Տրդատ թագաւորը չկարողացան երթալ ժողովի, ու որպէս հայ եկեղեցւոյ ներկայացուցիչ Նիկիոյ ժողովի ղրկեցին իրենց փոխանորդը Լուսաւորիչի որդի Արիստակէսը:

Ժողովը դատապարտեց Արիոսի ուսմունքը՝ այն համարելով հերետիկոսութիւն, եւ Արիոսը արտաքսեցին Եկեղեցիէն: Այս ժողովը առիթ մը եղաւ որ բանաձեւուի Եկեղեցւոյ հիմնական դաւանանքը. հաստատուեցաւ «Նիկիոյ Հանգանակ»ը, մեզի ծանօթ որպէս «Հաւատամք» եւ ընդունուեցան եկեղեցական կէանքը կարգաւորող կանոններ՝ «Ս. Տիեզերական Ժողովի քսան կանոններ» անունով: Արիստակէս իր հետ Հայաստան բերաւ դաւանաբանական այդ գրութիւնը ու կանոնները: Ս. Գրիգոր Լուսաւորչի հրաւիրած եպիսկոպոսական ժողովի կողմէ այդ կանոնները ընդունուեցան եւ հիմքը ծառայեցին Հայոց Եկեղեցւոյ Ուղղափառ հաւատքին:

Donations to Holy Trinity Armenian Church (August 26-30 2018)
Նուիրատուութիւններ՝ Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ

90th Anniversary of HTAC

Ohan & Anita Ohanessian

General

Hagop & Arpine Altounian

Altar Flowers

Alexan & Lena Avedissian
Hagop & Arpine Altounian

Louma

Grace Chaghlassian
Khatchig Mirzoyan
Gorgin Nazari
Sirvart Mikaelian

In Memory of their loved one's

Nourel & lena Beylerian
Trevor Gittins-White
Mishel Allahverdi
Salpy Kadjemian
Annie Ozhalacian

Baptism

Vartanian Family
Farjobyan Family

ԳԻՏԷՐԻՐ ԹԷ...

Ս. Թովմաս առաքեալի անունը յունարէն կը նշանակէ երկուորեակ եւ Նոր Կտակարանի մէջ զայն կը յիշատակուի նաեւ Երկուորեակ մականունով: Սակայն յստակ չէ թէ զայն որուն երկուորեակն էր եւ ինչու ստացած էր այդ մականունը:

DID YOU KNOW?...

In the Bible St. Thomas was mentioned as Didymus (which means “the twin”), but it is unclear whose twin he was, or why he was called by that nickname.




Կ'աղաչենք, ո՛վ Տէր, Քու ամենօրհնեալ ներկայութեամբոյ լեցուր մեզ այսօր: Հովուէ՛ մեզ, Հովուապետ բարի, մխիթարէ՛, պահպանէ՛ եւ զօրացո՛ւր մեզի եւ Քու փարախիդ մէջ խմբելով միաւորէ՛, որպէսզի հաւատքի միութեան մէջ գտնենք մեր կատարեալ մէկութիւնը իրարու հետ, ինչպէս մեր մէկութիւնը՝ Քու հետոյ: Ամէն:

We pray O Lord, fill us with Thy blessed presence today: be our guide, our good shepherd, comfort, protect and give strength to your sheep and unite us, so that in the unity of our faith we can find the perfect anonymity among ourselves, just as we found it with you. Amen.

Ս. Սեդանի ծաղիկներու եւ թերթիկի նուիրատու՝
Տէր եւ Տիկին Ալեքսան եւ Լենա Աւետիսեան
Ի Յիշատակ ննջեցեալ հարազատներու հոգիներուն

Խորանի Ծաղիկներու պատրաստում
«Ann's» Ծաղկանոց



The Altar Flowers and the Sunday Bulletin are sponsored by
Mr. & Mrs. Alexan & Lena Avedissian
In loving memory of deceased family members

Altar Flowers provided by
« Ann's » Flowers



ԱՄԷՆՕՐԵԱՅ ԱՂՕԹՔ



Բոլորը խնամող Տէր, Քու սուրբ երկիւղդ պահապան դիր
մեր աչքերուն՝ որ այլեւս անառակ ու ցանկացող աչքով
չնայինք, մեր ականջներուն՝ որ փխորժ չզգանք չար խօսքեր
յսելէ, մեր բերաններուն՝ որ ստուրթիւն չխօսինք, մեր
սրտերուն՝ որ չարութիւն չխորհինք, մեր ձեռքերուն՝ որ
անիրաւութիւն չգործենք, մեր ոտքերուն՝ որ անօրէնութեան
ճամբաներէն չքայլենք. այլ ուղղէ՛ ասոնց շարժումը, որպէսզի
միշտ Քու պատուիրաններուդ համաձայն ըլլան՝ ամէն բանի
մէջ. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ, այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Ս. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՅԻ

REMEMBERANCE DAY OF 318 FATHERS OF NICEAN COUNCIL (September 1, 2018)

In the early years of the Christian Church several misleading ideologies emerged that potentially led to divisions and disagreements within the Church. One of these ideologies that started spreading in IV century was the controversial view of Arius of Alexandria over the divine nature of the Son of God. According to Arius, Jesus Christ is not of the same essence as God the Father and he was created by Father. This view of Arius began to spread and disputes and opposition within the church escalated.

To settle these arising disputes, in 325 the Emperor Constantine called an Universal Assembly in the city of Nicea with the participation of 318 bishops representing all churches. The King of Armenia Terdat and St. Gregory the Illuminator were also invited to participate in this Council.

St. Gregory and King Terdat were not able to attend, and instead St. Gregory's son Aristakes was sent as the representative of the Armenian church at the Council of Nicea.

The Council condemned teachings of Arius declaring them as heretical and expelled him from Church. This Council also realized the importance of formulating the doctrine of the true Orthodox belief which became the "Nicean Creed" or "Havadamk" as well as twenty regulatory rules for church life known as canons.

Aristakes brought the 'Nicean Creed' and the regulatory canons to Armenia. St Gregory the Illuminator invited an Episcopal Assembly, which adopted the 'Havadamk' and the regulatory canons and they served as the foundation of the faith for the Armenian Orthodox Church.

Daily Wisdom

“Question: What are the stages of love? Answer: There are four stages of love. First, when I love myself for my own sake; this is not a noble love. Second, when I love God for my own sake; this love expects something in return.

Third when I love God because He is good; this is a noble love. Fourth, when I love myself for the sake of God; this is the best kind, because I do it for Him.”

St. Gregory of Tatev, The Book of Questions, 14th century

ԳԻՏԷԻՐ ԹԷ..

Եօթը Վերք եկեղեցին կառուցուած է 1874-1886 թթ եւ այժմ Շիրակի թեմի առաջնորդանիստ եկեղեցին է: Այս եկեղեցոյ պաշտօնական անունը Սուրբ Աստուածածին է, բայց յայտնի է նաեւ որպէս Եօթ Վերք՝ ի պատիւ եկեղեցոյ մէջ պահուող Սրբապատկերի:



Խորհրդային կարգերու հաստատման տարիներուն, երբ բոլոր եկեղեցիները փակուեցան, այս եկեղեցին կը գործէր նոյնիսկ Սովետական Միութեան տարիներուն, երբ Հայաստան փակուած էին բոլոր եկեղեցիները: Կը գործէին միայն Էջմիածնի Սայր Տաճարը եւ Ս. Եօթվերք եկեղեցին: Երբ Գիւմրիի միւս եկեղեցիներն ալ փակուեցան, Սբ. Եօթվերքի խորաններէն մեկը կը գործածէին կաթողիկէները, իսկ միւսը՝ ռուս ուղղափառ եկեղեցին: Եկեղեցոյ երկու փոքր գմբէթները աւերուեցան 1988-ի երկրաշարժի հետեւանքով: Որպէս հուշակոթող քանդուած գմբէթները դրուած են եկեղեցոյ բակը, իսկ անոնց տեղը շինուած է նորերը:

DID YOU KNOW?..

The 19th-century Cathedral of the Holy Mother of God, also known as Yot Verk or The Seven Wounds of the Holy Mother of God, is the seat of the Diocese of Shirak of the Armenian Apostolic Church.



During the Soviet period, when all the churches of Gyumri were closed, Yot Verk was the only place of Christian worship open to the faithful. Yot Verk church has 5 different altars, that served various Christian denominations. The main altar was used by Armenian Apostolic Church, the northern apse housed a statue of the crucified Christ from a Catholic church and was used for Catholic worship, and the southern apse was used by Russian Orthodox Church. The altar of St. Sargis served the Assyrians. There are two altars on the second floor too. If the dates of religious ceremonies coincided, the preference was given to Armenians. The two small cupilas were damaged during the earthquake of 1988. They were restored and the old ones are in the church yard.



ՀՈԳԵՀԱՆԳԻՍ-REQUIEM SERVICE



Եւս առաւել յիշեա Տէր զհոգին

Արեն Աւետիսեանի	Aren Avedissian
Մարտիրոս Որբերեանի	Mardiros Vorperian
Արուսեակ Մակարեանի	Arousiag Magarian
Արաքսի Իսկէնեանի	Araxi Isgenian
Անդրանիկ Իսկէնեանի	Antranig Isgenian
Մուրատ Աւետիսեանի	Mourad Avedissian
Մարիամ Դաւիթեանի	Mariam Tavitian
Տիրան Աւետիսեանի	Diran Avedissian



REMINDER



HTAC Parish Council would like to thank all our members for your continuous financial and moral support. We encourage our existing members to consider renewing their HTAC Membership. If you have already renewed your membership for the year 2018, we thank you for your contribution. Otherwise, we kindly ask you to pay your membership dues (\$70 for adults and \$30 for students 18 years and older). Thank you.

The parishioners, who are interested in **becoming a dues paying member** of Holy Trinity Armenian Church, are encouraged to approach the Parish Council members in the church lobby on Sundays to obtain the membership application or contact the church office during the week at 416-431-3001.

Holy Trinity Armenian Church & Barev Centre's Events

**Saturday,
Sept. 15, 2018
at 7:30 PM**

Celebrating The Victorious Battle of Mousa Ler and Blessing of Offering. Dinner, Dance & Cash Bar. At M. Artinian Hall

Tickets: \$30 – For 12 year and younger: \$15

For tickets please call.-

Sella Kaltakdjian- 416 490 1326

Church office – 416 431 3001

**Sunday,
Sept. 16, 2018**

Feast of The Exaltation of the Holy Cross.

Divine Liturgy at 10:30 AM

Celebrant Rev. Archpriest Fr. Zareh Zarkarian.

Folowing Divine Liturgy procession of the Holy Cross followed by the blessing and distribution of «Herissa».

**Sept.14,
&
Sept 18,
2018**

Registrations for Sassoun Dance Ensemble

Seniors- Sept 14, 2018 at 8-10 PM.

Juniors- Sept 18, 2018 at 7-8 PM.

At HTAC 920 Progress Ave., M1G 3T5

**Saturday,
Sept. 15, 2018**

Saturday School Re-opening Day.

The classes will start on September 15 at Forest Manor Public School: 25 Forest Manor, Toronto, ON, M2J 1M4

**Sunday,
Sept. 16, 2018**

Sunday School Re-opening Day.

Throughout the academic year the classes take place every Sunday from 10:30am-12:45pm in 'Maral Ishkanian' Hall in the lower level of our church.

**Sunday,
Sept. 23, 2018
At 11:00 AM**

14th Annual Golf Tournament at St Andrews vally Golf Club

**Saturday,
Dec. 1, 2018
At 7:30 PM**



Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցոյ Ծուխի հիմնադրութեան 90-Ամեակի նուիրում Պաշտօնական Ճաշկերոյթ, «Ս. Արթինեան» սրահէն ներս. Տոմսի սակ՝ \$75.

90th Anniversary of Holy Trinity Armenian Church Celebration Banquet

at Magaros Artinian Hall. Tickets \$75.

**Sunday,
Dec. 2, 2018**

90th Anniversary of Holy Trinity Armenian Church
Divine Liturgy.